



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ  
ՀՐԱՄԱՆ

No 1126-Ա/2

03.11.2016թ.

**2016-2017 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՍՈՎՈՐՈՂԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ, ՊԵՏԱԿԱՆ  
ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ԵՎ  
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ ենթակետի պահանջով՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝**

1. Հաստատել 2016-2017 ուսումնական տարվա գիտելիքների ստուգման, պետական ավարտական քննությունների կազմակերպման, անցկացման աշխատակարգը և ժամանակացույցը՝ համաձայն Հավելվածի:
2. ՀՀ կրթության և գիտության նախարարության «Կրթություն» շաբաթաթերթի խմբագիր Գ. Մինասյանին՝ հաստատված աշխատակարգը և ժամանակացույցը տպագրել պաշտոնաթերթի առաջիկա համարում:
3. ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչության պետ Ա. Բաղդասարյանին՝ հաստատված աշխատակարգը և ժամանակացույցը տեղադրել նախարարության պաշտոնական կայքէջում:
4. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ Մ. Մկրտչյանին:

**ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆ**